

Զ Խ Ն Ե Ձ Ե Դ

Ս. Արտոնյա Ձևագրասան ք. 231 գրչագիրը ընթերցելիս Գանձգիրք-Տաղարան մըն է, շաւրդորդով, Սանցի Լեւոն Դպրի կողմէ օրինակուած. Եւրոսս դիմի Տէր Սարգիս Եսիսկայսին (1281-1313) համար. Այս ձեռագրին մէջ կան մի քանի տաղեր Ս. Ներսիս Շնորհալիին, որոնք նոյն հնդկական յափափեղանակ գրտածներուն ՎԼՆՆՆիկի 1էՏՅԻ հուսաւարտութեան մէջ բերի են. Մեր Ս. Հայրապետին այդ գեղեցիկ տաղերուն հաստատութիւնը ՕՍիոնի մէջ, կը խորհիմք թէ ուրախութիւն պիտի պատճառէ Ամսագրի ընթերցողներուն. Տպագրուիլն էւ մեր ձեռագրին միջեւ գտնուող կարեւոր տարբերութիւնները կը նշանակենք շուսանցի վրայ:

ՏԱՂ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՈՒԹԵՐՈՐԻ ԱՌՈՒՐՆ

Նոր եղեմ բանաւոր տնկոյն, նոր Ադամն ի քէն ճրնոյն նորոգաւդն:
Երկակի դիմառից առիթ, անբակ միութիւն⁽¹⁾ էին ընդ եղումն:
Բենական արփիւ առլըցեալ, զմինքն մարմնապէս ժընար վերբառին:
Սիրամարգ ոսկէտիպ նըկար⁽²⁾, տառարկ ողբախոհ մաքուր աղաւնի:
Էրեւեալ ծաղիկ գարնայնւո, վարդ մանիշակ բըրբում շուշան վայելուչ:
Սարդէոն յակինդ դահնակ, յասպիս կարկէհան զմրուխտ շափուղայ:
Ի տիպ ի նոյն⁽³⁾ վակասին յեռեալ, կայծ եւ տպագրին նորն Ահարովնի:
Երկնագոյն⁽⁴⁾ աւդամանուած շար, բնեզ եւ ծիրանի նիւթ նոր խորանիդ:
Բակերտեալ Քամասեռիցս ելք, ընդ քեզ վերաբերիլ առ ի քէն ծագումն:
Գոյելով զեռահիւսակ նըւագս, երիցն ի միումն յաւէծ միշտ ըզվառաս:

ՏԱՂ ՄԵԾԻ ՈՒՐԲԱԾԻՆ

Անեղ որդին Հաւր միածին բազկատարած,
Այսօր եկաց ի յատենի Պիղատոսի⁽⁵⁾:
Բարծեալ մարմնով ի խաչն անճառ խոնարհութեամբ
Բերեալ բազկաւ ընդ հեռացեալ ազգըս⁽⁶⁾ մարդկան:
Գառն անարատ ածեալ ի սպանդ պատարագի,
Գայ հաշտութեամբ Հաւր ի քառնալ զմեղս աշխարհի:
Դատապետը⁽⁷⁾ եղեն դպիրք առ Պիղատոս,
Դատաստանաւ բառնալ ի խաչ բողոքէին:
Եկն եհաս վախճան նման⁽⁸⁾ նախաստեղծին,
Եւ ցուրտ եւ պարզ աւր մի յայտնեալ տեառն Աստուծոյ:
Զէլի էլի տէր⁽⁹⁾ զըթութեանց տայր ի խաչին,
Ըզհաշտութիւն Հաւր խաչհանացն աղաթելով:
Էն է ինքեան ընդ մեզ Աստուած⁽¹⁰⁾ յաւիտենից,
Երեւեցաւ մեզ ի վախճան ժամանակիս:
Ընդ մեզ Աստուած յայտնեալ բարծեալ մարմնով ի խաչ,
Ընդդէմ լուստ արեգականըն կընքելո⁽¹¹⁾:
Թողեալ լբաւ լոյսն ի ծոցո արեգականն,
Թաքոյց յինքեան ըզճառագայթս ի միջաւրեա⁽¹²⁾:
Ժամուն ոչ տիւ⁽¹³⁾ եւ ոչ գիշեր ստ մարգարէին,
Ժամանեալ տէր գայ⁽¹⁴⁾ գաւրութեանց ի պատերազմ:
Իշխանութեամբ առ Հայր գիողին աւանդելով,
Ինքն ի հանդէս մարտի ընդդէմ մահու իջեալ:
Լուեալ իշխանք չարին պակեան ահիւ մեծաւ,
Լուեալ մահու եւ դրժոխոց սասանեցան:

(1) Տպ. միութեամբ. (2) Տպ. ոսկէտիպ նըկար յագի. (3) Տպ. ի նոյն. (4) Տպ. չոռնի վերջին երեք տողերը. (5) Տպ. մեղաւորաց. (6) Տպ. զեռացեալ ազգս որդւոց. (7) Տպ. դատապետ. (8) Տպ. Մահու. (9) Տպ. Լուս. (10) Տպ. Էնն էին անպարագիւն. (11) Տպ. Գեղեւոր. (12) Տպ. ի մէջօրեայն. (13) Տպ. Ժամուն ոչ տիւ էր. (14) Տպ. գայ տէր: